

18986

ԿԱԳԻԿ

891.99

Կ-73


Թիֆլիս

1910

№ 102  
«Պարիզյան»-ի խմբագրություն

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍԼԱՆԵԱՆՑԻ

1303



# ՓՆՋԻԿ

ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
«Պարիզյան»-ի

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ Ի Ն Ի Ս

27A

1910

«Երևան» պ. Օլգինո. և Տեփ. № 1

891.99  
Փ-73

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍԼԱՆԵԱՆՑԻ

891.99

Փ-73

Կ.

# Փ Ն Ջ Ի Կ

1008  
35731

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ**

«Պարսիզպան»-ի

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

2003

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1910

Тип. "Гуттенбергъ" уг. Ольгинской и Слѣщ. № 1

4498



ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Միքանի խօսք միտքս եկաւ, որոնք անա պիտ ասեմ,  
Վատ էլ լինի մեղաւոր չեմ, ինչ գիտեմ կ'կատարեմ.  
Որքան որ իմ թոյլ գրիչս կարողանայ պիտ շարեմ,  
Դձը ինձ ներէք ո՛վ բանաստեղծք զի ուսումից տկար եմ:

Հայոց անմահ հեղինակաց թող լինեմ ստոր ծառան,  
Յուսով եմ երկայնամտութեամբ կնայեն գործիս վերան.  
Վեհ հոգւով, ազնիւ բնութեամբ չեն առնիլ գործս խտտան,  
Յանկանում եմ սրտիս իղձը թերթի վրայ նկարեմ:

Խնձ յայտնի է իմ երգերս են անալի-անճաշակ,  
Գիտնականաց մօտին անպէտք՝ համարեա աննպատակ.  
Քայց ի՞նչ արած այսքան գիտցայ, ազոաւր չի լինի սոխակ,  
Խնչ և իցէ ես էլ մի կերպ երգերի սիրահար եմ:

Դեմուրչեանն եմ, ազգանունս փոխում եմ «Պարտիզպանի»  
Գիտելով որ պարտիզպանը գոյնզգոյն ծաղկունք կ'ցանի  
Ես էլ ուզում եմ սերմանել թէ Աստուած տայ բուսանի  
Իմ փշալից ասպարէզըս պիտ' նրանցով զարդարեմ:



Փշոտ՝ վարդի թուփի,  
Պատահեցայ ես ափսոս  
Ձեմ կարում վարդս քաղի,  
Շատ տրտմեցայ ես ափսոս:  
Վարդիս գոյնն է կարմրագոյն,  
Թերթիկները խիստ փայլուն,  
Վարդիս տեսքն է վառվռուն  
Ձեռքս չի հասնում ափսոս:  
Վարդիս դէմքն է շատ զուարթ,  
Համեստափայլ և սաղարթ  
Շքեղ բացուած ժամն է արդ,  
Թուփը ծակում է ափսոս:  
Վարդիս թուփը անխնայ  
Ծակոտում է անզգայ,  
Այս իսկ ցաւով ես հիմայ,  
Փոշմանում եմ շատ ափսոս:  
Վարդիս սիրոյն գերի եմ,  
Թէև բաղդով թերի եմ,

Բայց իմ վարդիս սէրի եմ,  
 Չեմ կարում համենլ ափսոս:  
 Պարտիզպանիս յոյս ունեմ,  
 Որ վարդիս արժան լինեմ,  
 Չոր փուշը ես կ'փշրեմ,  
 Բայց լինում է ուշ, ափսոս:



ԴՈՒԲԷԻԹ

Նազաքայլ ընթացող սիրուն,  
 Կեանքս քեզ մատաղ, քեզ մատաղ,  
 Տոչորում եմ ես քու սիրուն,  
 Կամ միշտ մտազբաղ, մտազբաղ:  
 Սիրահարեմ քեզ անկեղծիք,  
 Դու իմ աղանի գեղեցիկ,  
 Աշխարհի միջին մի հատիկ  
 Հասիր անհապաղ, անհապաղ:

Դու ես իմ ազնիւ ընկերս,  
 Դու ես գրաւել իմ սէրս,  
 Թէ պիտի մերժես խնդիրս  
 Շուտով դի՛ր դագաղ, դի՛ր դագաղ:  
 Պարտիզպանը քեզ կ'սիրէ,  
 Իւր կեանքը քեզ կ'նուիրէ,  
 Առանց քեզ նա շատ տխուր է,  
 Օգնի՛ր անզբաղ, անզբաղ:

ԽԱՐԵԲԱՅ ՍԻՐՈՒՀԻ

Թէ սիրահար ես, ինձի վշտացնելդ ի՞նչ է,  
 Թէ բերկրարար ես, ինձի չարչարելդ բաս ի՞նչ է,  
 Թէ անմոռաց ես, ինձի մոռանալդ բաս ի՞նչ է,  
 Թէ որ մոռանում ես ինձի, սուտ յոյսերդ բաս ի՞նչ է:  
 Եթէ յոյս ես տալիս ինձ, մի՛ յետ դառնար, սիրելի,  
 Քու մասին չարչարվելուց չունեմ դադար, սիրելի,  
 Սիրուցդ ես եղել եմ խենթ, խելագար, սիրելի,  
 Խելագար ես համարում, փայփայելդ բաս ի՞նչ է:  
 Չգիտեմ, մոռանալդ ասե՛մ, թէ՞ անչափ սիրելդ,  
 Սիրոյ պայմանը չ'խախտել, յարաժամ պատուիրելդ.  
 Ինձ՝ քու սիրահարիդ համար, քու առձեղ նուիրելդ,  
 Ուրեմն ես սխալ եմ, ինձնից փախչելդ բաս ի՞նչ է:  
 Երևի թէ սիրուէի, դու խաբեբայ դեր ունես,<sup>3</sup>  
 Ելեկտրական զօրութեամբ քաշող պատկեր ունես,  
 Քեզ անձնատուր եղողներին շողջորթող սէր ունես,  
 Պարտիզպանին քու սուտ ասելդ բաս ի՞նչ է:



ՍԻՐԵԼԻՍ ԻՆՉ ՀԻԻՐ

(«Քէշիշ Օղլի» եղանակով)

Այսօր մէկ լուր հասաւ իմ ականջիս սուր,  
 Թէ՛ անկեղծ սիրելիս գալիս է ինձ հիւր,  
 Կ'վարենք ուրախ ժամեր դիւր,  
 Կ'տանք մենք միմիանց փոխադարձ համբոյր:  
 Քու մասին շատ ցաւեր շատ նեղութիւններ,  
 Քաշեցի տանջվելով, ունեցայ հասրեր,

Այժմ նուրբ շրթունքդ շրթունքիս մօտ բեր  
Բաւական է միան նորա սեւթոյր:

Պարտիզպանի կեանքը դու ես միայնակ,  
Դու ես իմ սիրելիս, դու ես իմ հոգեակ,  
Մահ կ'պատճառես ինձ, թէ թողնես մենակ,  
Առանց այն էլ դառն է վիճակս, տխուր:



ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՐ

Մեղմիր իմ ցաւերս անկեղծ սիրական,  
Սերովդ տեղերում եմ տարապայման,  
Չունեմ ոչ մի տեղից յոյս խրախուժեան,  
Գուցէ քեզնով լինի իմ ցաւոյս դարման:

Յոյս են խօստանում ինձ քու մտիկ տալդ,  
Խրախուսանք է ինձ ուրախ ժպտալդ,  
Միանգամայն կենդանութիւն է ինձ խնդալդ,  
Մի խոժորիր դէմքդ, ո՞հ իմ աննման:

Քանի որ քու սէրդ սրտումս է, հաստատ,  
Ինձ այս փո՛ւշ աշխարհը թոււմ է դրախտ,  
Առանցի քեզ ես կ'լինեմ տարաբաղդ,  
Բարբառիր սիրալիք լեզուովդ, դիւրական:

Սէր են քու խօսքերդ սէրիս դու ինքնի,  
Քու երգովդ գերազանցում ես սոխակին,  
Միայն մի մոռանալ դու քո Պարտիզպանին,  
Եթէ ոչ նա կ'լինի իսպառ անկենդան:

ՎԱՏ ԸՆԿԵՐ

Աչքերդ կուրանայ,  
Լեզուդ համրանայ,  
Ոտքերդ թուլանայ,  
Վատ ընկեր տեսնեմ:

Մէջքդ թող փշրուի,  
Ձեռքերդ կոտրուի,  
Մարմինդ քրքրուի,  
Վատ ընկեր տեսնեմ:

Միտքդ թնդ մոլորուի,  
Հոգիդ աւանդուի,  
Ճանապարհդ կապուի,  
Վատ ընկեր տեսնեմ:  
Չեղաւ որ քեզանով,  
Խնդամ ապահով,  
Դու ընկնես արեան ծով,  
Վատ ընկեր տեսնեմ:

Թշուառ դարչելի դու,  
Սրտով անազու,  
Դու լինես մին քոռ քու,  
Վատ ընկեր տեսնեմ:  
Դաւաճան ես վատթար,  
Գիտութեամբ տկար,  
Միշտ աանջլես չարաչար,  
Վատ ընկեր տեսնեմ:

Խոզի պէս աղտոտ ես,  
Շատ ժահահոտ ես,  
Ժանգիդ մէջին փթես,  
Վատ ընկեր տեսնեմ:

Նպատակիդ չ'հասնես,  
 Ինչ բան որ ուզես,  
 Քեզ վերայ շուարես,  
 Վատ ընկեր տեսնեմ:

Անիձանացս շուտով,  
 Կ'տիրանաս Աստուծով.  
 Բորոտես ողջ մարմնով,  
 Վատ ընկեր տեսնեմ:  
 Պարտիզպանին դու շատ  
 Տանջեցիր, կ'նատ,  
 Միշտ մնաս դու կիսատ,  
 Վատ ընկեր տեսնեմ:



**ԲԱՐԻ ԵՒ ԱՌԱՔԻՆԻ ԸՆԿԵՐ**

Կեանքս գրաւ կ'տամ ընկերիս լաւ ին,  
 Հոգիս մատաղ կանեմ նորա ոտներին,  
 Ականջս լարած եմ լսել համբաւին,  
 Կուզեմ որ հասնի վերին եթերին:

Լաւ ընկերը անկեղծ ընտանուց լաւ է,  
 Նորան անբաղդ տեսնել ինձ համար ցաւ է,  
 Թէ նա հիւանդանայ, ես մեռնեմ լաւ է,  
 Արատ չի լինի վատ ընկերի գործերին:

Լաւ ընկերը յատուկ հաւատարիմ է,  
 Ուր լինես քեզ հետ մտերիմ է,  
 Անհարազատներին նա ոխերիմ է,  
 Արդար խիղճը նկարուած է պատկերին:

Ով ոք ունի բարի ընկեր աշխարհում,  
 Միշտ ուրախ է, չի լինիլ մի օր տրտում,  
 Լաւ ընկերը քեզ միշտ բարի գործերում,  
 Օգնական է պարգևուած Տեսչէն վերին:

Եթէ փորձանաց մէջ ընկար դու յանկարծ,  
 Քեզ համար կաղօթէ նա բազկատարած,  
 Նա քեզ հետ է մինչև գործի կատարած:  
 Քեզ հանգիստ կ'գտնես նորա կուներին:

Լաւ ընկերդ երբէք քեզ չի մոռանայ,  
 Ինչդ որ պակաս է բերան մի բանայ,  
 Առանց քու ասելուդ միշտ նա կ'ջանայ,  
 Լրացնել եղած պակասութիւններին:

Լաւ ընկերը չի թողնիլ քեզ խեղճանալ  
 Թշնամիացդ ձեռքում և ստրկանալ.  
 Թէ պատահեց քեզի մեռնել, մահանալ,  
 Իագաղիդ կ'փարուէ արցունքն աչքերին:

Լաւ ընկերի յարգը պիտի իմանալ,  
 Նորա տուած նեղութեանը դիմանալ,  
 Եթէ որ ուզում ես իսկն իմանալ,  
 Գնահատել չի լինի ազնիւ ընկերին:

Լաւ ընկեր ունեցողը բաղդաւոր է,  
 Պայծառ է աչքերը և լուսաւոր է,  
 Լաւ ընկերը քեզի միշտ հարկաւոր է,  
 Նորա՞նով կ'գտնես աստիճան վերին:

Ամէն ազգօգուտ գործ, ուսում, գիտութիւն,  
 Ընկերութեամբ ունի շարունակութիւն,  
 Տացէ Աստուած բարի սիրտ, անկեղծութիւն,  
 Ազգիս ընկերութեան վեհ անդամներին:



Պարտիզպան դու վատ ընկեր էլ ունեցար,  
 Էնդուր լաւ ընկերիդ վարքը ճանչեցար,  
 Որքան ազգդ այնքան դու անբարեացար,  
 Այժմ երջանիկ էք շնորհօք բարի ընկերին:



ԱՐԴԵՕՔ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ

Ձանք արեցի աւելացնել ուժս և կարողութիւնս,  
 Թոյլ տւեցի իսպառ անհետ ծուլութիւնս, հեղձութիւնս,  
 Շատ չարչարանք քաշեցի հեռացնել աղքատութիւնս,  
 Բայց վերջումն անյաշոյ փոխեցաւ իմ դրութիւնս:

Երբ լսում էի մէկը առուտուր ունի աջողակ,  
 Տքնում էի անդադար ես ունենալ նոյն քանակ,  
 Շատ կարօտանք քաշեցի, որ ունենամ լի քսակ,  
 Բայց մէկս երկու չեղաւ, դուր կորաւ աշխատութիւնս,

Բազդիս մեղադիր եղայ ես ինձ անբաղդ համարելով,  
 Ասելով թէ բաղդ չունեմ պիտի մեռնեմ սև օրով,  
 Վասն զի շատ հնարքներ գործեցի զանազան փորձով,  
 Յիմարութեան փոխարկւեց իմ արած մտածութիւնս:

Նկատեցի, այս չեղաւ, տեսնեմ թնց են հարուստները,  
 Օրինակաւ վեր առնեմ մի առ մի նոցա վարքերը,  
 Գրելով սրտիս մէջը՝ սովորեմ նոցա հնարքները,  
 Գոհակութեան փոխարկւեց իմ հնարագիտութիւնս:

Տեսայ, որ հարուստներին ամօթանք չէ մարդու խաբել,  
 Տեղն եկաւ, հարկաւոր է նմանապէս սուտեր խօսել,  
 Իմ մօտումը մի բան տեսաւ աշխատել հնարքով կորզել.  
 Մրանցը այսպէս տեսած՝ ոսկոռս դողաց մտումս:

Կոպէկի համար մտմտալ, քծնել, ստորանալ, սողալ,  
 Անձնական շահերի համար աղբի և տղմի մէջ լողալ,  
 Ունեցածը չ'մսխել, մաղկտալ, աղերսել, դողալ.  
 Այս ամենը տեսնելով վերջացաւ համբերութիւնս:

Երևի թէ այս իսկ է հարստութեան մեծ հնարքը,  
 Պինդ պահել մայր գումարը, թէև պակաս է տան արքը,  
 Միտքս սաստիկ պղտորում է տեսնել այսքան արարքը,  
 Մտածում եմ, չեմ կարող փոխել իմ բնութիւնս:

Երբեմն էլ հնարք եմ գործում՝ աշխատածս չ'մսխել,  
 Որքան որ կայ նրանով բաւական է, կառավարուել,  
 Արմատացած շոսյուլութեանս չեմ կարողանում սանձել,  
 Դատեցի աղքատ՝ ազատ քան թէ հարուստ գերութիւնս:

Գերի իսկ են արդարև այս փողապաշտ հրէշները,  
 Մի կոպէկին ծառայ են, թէկուզ քանդւի տները.  
 Տասն գերդաստան կ'զրկեն և կ'լցնեն զբպանները,  
 Առանց խղճի խայթոցի, կորաւ իմ դատողութիւնս:

Պարտիզպանս չեմ համնիլ հարստութեան փառքին,  
 Ո՛չ աղքատ եմ, ո՛չ հարուստ, ո՛չ փողասէր բոլորովին,  
 Մաքրապէս կառավարել, հազնել, ուտել ըստիւրկարգին,  
 Լաւ է և մարդավայել, քան հարուստ ժլատութիւն:



Ս Է Ր

Ես՝ սիրոյ վերայ խօսել պարտական եմ ամեն անգամ,  
 Վասն զի շատ աղբիւրէ նիւթ եմ առնում, սէր ունենամ,  
 Սիրոյ բարձր յարգը գիտցած չեմ ուզում որ, անսէր մնամ.  
 Կ'ցանկայի քեզ էլ ինձ հետ սիրով կապել միշտ յարաժամ:  
 Քաղցրախօս սերապատում երգ եմ երգում ես անմամն,  
 Բայց ափսոսում եմ սիրունի, չ'ունիս հետս սիրոյ պայման,

Ես որքան սէր բառիկը կամիմ հնչել իմ բերանով,  
 Քո յունքերից և աչքերից զուշակում եմ լսել փութով,  
 Որովհետև այս մասին դեռ չեմ քեզանից ապահով,  
 Մեղմացիր ո՛վ սիրունի, նայիր խեղճիս վերայ գթով:  
 Քաղցրախօս սերապատում երգ եմ երգում ես աննման,  
 Բայց ափսոսում եմ սիրունի, չհունիս հետս սիրոյ պայման:

Քեզ որքան սէր եմ պատմում, հերքում ես իմ խօսքերը,  
 Մի խորշի սէրից, հոգիակս, սէրն է աստուծոյ պատուէրը,  
 Մարգկային սիրոյ համար գերեզման իջաւ մեր Տէրը.  
 Բայց սիրուց որ փախչում ես, անարգում ես քու պատկերը:  
 Քաղցրախօս սերապատում երգ եմ երգում ես աննման,  
 Բայց ափսոսում եմ սիրունի, չհունիս հետս սիրոյ պայման:

Երանի պարտէզ լինէիր, ես քեզ պարտիզպան լինէի,  
 Գարունն որ բացուած ժամանակ վերադ հոգսաբան լինէի,  
 Գոյնզգոյն ծաղիկներով լցրած զբօսման լինէի,  
 Քեզ տեսած գեղազուարճ հոտովդ զմայլման լինէի:  
 Քաղցրախօս սերապատում երգ եմ երգում ես աննման,  
 Բայց ափսոսում եմ սիրունի, չհունիս հետս սիրոյ պայման,

Ճիշտն ասեմ, քու պատկերիդ արեգակն ո՛չ է նման,  
 Գիշերուայ անքուն թագունի լուսնեակն ո՛չ է նման,  
 Այտերիդ կարէ նմանիլ վարդի թերթիկները միմիայն,  
 Պարտիզպանիդ մի զրկիր վայելել, քեզ նա է արժան:  
 Քաղցրախօս սերապատում երգ եմ երգում ես աննման,  
 Բայց ափսոսում եմ սիրունի չհունիս հետս սիրոյ պայման :



ՀԱՅ ԱԶԳ

Եթէ քնարը լար չունի,  
 Խեղճ քնար ածողն ի՞նչ անէ,  
 Հայ ազգը բարերար չունի,  
 Դատարկ մտածողն ի՞նչ անէ:

Ահա վեց դար է անտարբեր,  
 Նիրհում է հայը բազմահամբեր,  
 Գուցէ տևի ևս դարեր,  
 Միակ ցաւացողն ի՞նչ անէ:

Անմիութեան դրօշակի տակ,  
 Թափառում է աննպատակ,  
 Եթէ մնայ միշտ այս տեսակ,  
 Յառաջ ընթացողն ի՞նչ անէ:

Կար ժամանակ որ հայ ազգը,  
 Գիտում էր իւր անուան յարգը,  
 Որ փոխւել է հայի վարքը,  
 Վեհ կարգադրողն ի՞նչ անէ:

Հարիւր հայից՝ մի գրագէտ,  
 Հազիւ դուրս գայ, և բանագէտ,  
 Հայերիս մեծ մասն է տգէտ,  
 Անբաղդ յորդորողն ի՞նչ անէ:

Տեղեակ չէ հայը իւր նախնեաց  
 Քաջութիւնիցն անցկացրած.  
 Հայերի միտքն է բթացած,  
 Ուսում տարածողն ի՞նչ անէ:

Պարտիզպան, թէ փափագում ես,  
 Որ ազգիդ օգտակար լինես,  
 Դաշնակցութեան որ չ'դիմես,  
 Քեզ յոյս խոստացողն ի՞նչ անէ:

ՀԱՅ ՀԵՐՈՍԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ

Մի խնդացէք, ես տրտում եմ,  
 Բռնի որ իմ օրս սև է,  
 Մութը բանտում խարխափում եմ,  
 Թէև դուրսը պարզ արև է:  
 Հայրենեացս ջերմ կարօտով,  
 Տոչորւում եմ վառւում բոցով,  
 Թէ Աստուած տայ դուրս գամ շուտով,  
 Նպատակս անկերև է:  
 Պիտի վազեմ կուրի դաշտը,  
 Այնտեղ որտեղ Անդրանիկն է.  
 Թո՛ղ դէմս գայ Ջրադաշտը,  
 Իմ ուժերս յարատև է:  
 Թո՛ղ կուրծքիցս ես գնդակով,  
 Վէճը ստանամ գոռ թշնամուց,  
 Բայց ես դարձեալ իմ նիզակով,  
 Կ'ծակեմ, ձեռքս թեթև է:  
 Կ'ծակեմ այն գարշելի բիրտ,  
 Մուռտար քրդի ճակտի միջէն,  
 Կ'խողողեմ մանրակրկիտ.  
 Ես վախ չունեմ, թէ նա դև է:  
 Այն ժամանակ իմ արիւնը,  
 Թո՛ղ խառնւի քաջերի հետ,  
 Տաժանէ բանտի անկիւնը,  
 Այնտեղ մահը խիստ թեթև է:



ՏՐՏՈՒՆՁ

Մէկ լուր ինձի սերարան, գոնէ միտ ան խօսքերս,  
 Թէ կլինի հաճելի, մէկ նկատիր աչերս,  
 Հանապազ արտասուալի, շուտ փարատիր վշտերս,  
 Որով կ'լինես, իմ անձիս ազատիչ և փրկարար:  
 Միրոյդ, ես գերի եմ եղել, մի րօպէ չեմ մոռանում,  
 Բնակութիւնս թողած, հեռու երկիր եմ գնում,  
 Թէև ուզում եմ սանձել բնութիւնս՝ չեմ կարում,  
 Որովհետև իմ կեանքիս ես, տագնապիչ չարարար:  
 Գիշեր ցերեկ, չունեմ հանգիստ, Պարտիզպանս մի  
 վայրկեանս,  
 Ամպամած արեգակ է, կամ անդադար վարանման,  
 Մէրս սիրտս մաշել է, իմ անփութիս բնութեան  
 Է խոցոտիչ, լեարդերուս վիրաւորիչ և դժուար:

6008  
35731



ՍԻՐԵԼԻՍ ԳՆԱՑ

Ո՛հ միտ դրէք իմ ցաւերիս, անբաղդ սիրականս գնաց,  
 Ախոսացէք հասակիս, երգ, ուրախականս գնաց,  
 Իւր տեսութեանն արժանի չարեց անարժանս՝ գնաց,  
 Գնաց՝ ինձ սփոփութիւն, այսքան չարչարանս մնաց.  
 Գնաց, սիրելիս գնաց, հոգիս տարաւ իւր հետը,  
 Երանի ինձ, չբացած լինէր, սիրոյ փակեալը:  
 Նորա սիրոյ կրակում, ես իմ անձս խիստ մաշեցի,  
 Նորա սիրոյ սլաքներով, փափուկ սրտիկս տաշեցի,  
 Մերոյս արգասեաց պտուղը, հազիւ հազ թէ ճաշեցի,  
 Փութով զրկած իւր տեսից, թողեց, անկենդանս գնաց:

Գնաց, սիրելիս գնաց, հոգիս տարաւ իւր հետը,  
Երանի ինձ, չբացած լինէր, սիրոյ փակետը:

Նա որ գնաց, իմ սիրոյս բորբոքեալ հուրը լրացաւ,  
Նորա լաւութեան մասին, լսելու լուրն լրացաւ,  
Սիրոյն գերի եղածիս տալու, համբոյրն լրացաւ,  
Երբ այս բոլորը լրացաւ, քանդեց իմ ջանս գնաց.  
Գնաց, սիրելիս գնաց, հոգիս տարաւ իւր հետը,  
Երանի ինձ, չբացած լինէր, սիրոյ փակէտը:

Լսեցէք Աստուած սիրէք, զրկուածիս բողբոջանքը,  
Սիրելիս ինձ մոռացաւ, մերժեց իմ աղաչանքը,  
Այնքան արեց, որ գերի շինեց իրան իմ կեանքը,  
Ողբալով, որբացածիս տէր ու տիրականս գնաց.

Գնաց, սիրելիս գնաց, հոգիս տարաւ իւր հետը,  
Երանի ինձ, չբացած լինէր, սիրոյ փակէտը:

Գնաց, գնաց այն անգութը, տարաւ միտքս իւր հետը,  
Մարմինս մեռած, անթաղ հոգիս գրաւեց հետը,  
Մեռած մարմինս, մի պաշտպան ուշքս էլ տարաւ հետը,  
Պարտիզպանի տրու՞մ կենաց, զուարթ բերկրանքս գնաց.  
Գնաց, սիրելիս գնաց, հոգիս տարաւ իւր հետը,  
Երանի ինձ, չբացած լինէր սիրոյ փակէտը:



### ԱՌ ՍԻՐՈՒՆԻՍ

Անմասնիդ տեսութեանն կարօտ մի անիլ, հոգի ջանս,  
Հնարաւոր բան է, անտես մի անիլ, հոգի ջանս,

Սիրտս արդէն բորբոքւած է, կրակ մի անիլ, հոգի ջանս,  
Սէրդ հետս հաստատուած է, շատ նազ մի անիլ, հոգի ջանս,

Իմ աղաւնի՝ կարօտանքդ երիտասարդ ջանս մաշեց,  
Քու գրկախառն գկուանքդ, կրակից իրանս խաշեց,

Անկեղծաւոր փայտայանքդ, ի կամքս դէպի քիզ քաշեց,  
Քեզ, իմ հոգիս, պարգևուած է, տնազ մի անիլ հոգի ջանս,

Կաքաւի պէս սորոր տալով, ինչո՞ւ դէպի ինձ չես գալիս,  
Սոխակի պէս դու երգելով, ինչո՞ւ ինձ բարև չես տալիս,  
Թողել ես տոչորւելով, մոռացել ես, թէ իգբալիս,  
Սիրոյդ պայմանն գրուած է, խաղ խաղ մի անիլ հոգի ջանս:

Երբ ուզում ես չ'մեռնեմ, կուրծքիդ կոճակը բաց արնս,  
Դիր բերանս, որ միշտ ծծեմ, ջուխտակ գնդակն բնց արա,  
Օշմարդ քիչ ներքև բաշիր, պոռոչիդ տակն բնց արա,  
Բնց արա, ժամանակն հասաւ, անմաս մի անիլ հոգի ջանս:

Պարտիզպանիդ թէ սիրում ես, ետերիս<sup>1)</sup> հերքիլ  
եմ ասում,  
Հանապաղ կեանքս մաշում ես, մոռանալք թարգիլ<sup>2)</sup>  
եմ ասում,

Երբ բանբասում են, տեսնում ես, խօսքերը մերժիլ  
եմ ասում,  
Վարքդ ամեն տեղ գովուած է, փարվազ<sup>3)</sup> մի անիլ  
հոգի ջանս:



### ԿՈՐՈՒՍՍԾ ՍԻՐՈՒՆԻՍ

Քեզ տեսնելով տխուր սիրտս խնդացաւ,  
Ո՞ւր էիր իմ հրեշտակ, որոնեցի շատ,  
Արտասուլաթոր աշերս պայծառացաւ,  
Ո՞ւր էիր իմ հոգիս, որոնեցի շատ:

1) Ետդ Տաճկերէն օտար ասել է, 2) վերջ տալ,  
3) պոռոչ տալ.

Որոնելով երբ չ'գտայ քեզ անգին,  
Օրս սև ու սուգ էր, կեանքս տխրագին,  
Փառք Աստուծոյ, արժանացայ քեզ կրկին,  
Ո՞ւր էիր աղաւնիս, որոնեցի շատ:

Չես իմանում, որ առանց քեզ մեռած եմ,  
Այդ պատճառով, գործիցս հեռացած եմ,  
Աշխարհումս մենակ քեզի ընտրած եմ,  
Ո՞ւր էիր հոգիակս որոնեցի շատ:

Պարտիզպանդ բուրաստանդ ջրելով,  
Լցրել է պարտէզդ շատ ծաղիկներով,  
Աչքը ճամբիդ մնաց, քեզ սպասելով,  
Ո՞ւր էիր նագելիս, որոնեցի շատ:



**ՆՈՒԷՐ ՀԱՅ ԱԶԳԱՍԷՐՆԵՐԻՆ**

Մարդկութեան շրջանում թո՛ղ ծլին ծաղկին,  
Հայ ազգին նուիրւած դաշնակցականները,  
Ամենայն փորձանքից թո՛ղ ազատ լինեն,  
Քաւարը դուրս վանող ախոյանները:

Որոնք ազգի ցաւը միշտ կ'մտածեն,  
Ուսում գիտութիւններ մէջ կ'ներածեն,  
Գիշեր ցերեկ տանջանաց մէջ ընկած են,  
Այն խեղճերին օգնող բարեբանները:

Ազգօգուտ գործերին ճիշտ կ'հետեն,  
Գանձն ու անձն ազգի օգտին կ'դոհեն,  
Ամենայն տեղ ընկերութիւն կ'հիմնեն,  
Քարեգործ մարդասէր ճշտաբանները:

Կ'տարածեն շաբաթաթերթ, օրագիր  
Հրահանգիչ, ամսաթերթ և լրագիր,  
Հայոց ազգի անցքը վիպող պատմագիր,  
Այն հմուտ, հեղինակ, հայկաբանները:

Մեզ արժան է, սրանց համար աղօթել,  
Որ կարենան սուրբ գործեր շարունակել,  
Հիմքը դրած գործը, տանել անարգել,  
Որ ցնծան մեր նախնեաց գերեզմանները:

Վիշտը, տառապանքը, հայոց աղքատի,  
Մեծ հոգատարութեամբ ունեն նկատի,  
Ինչպէս սրբազան պարտք ամեն անհատի,  
Խրախոյս են, որբ անօգնականներին:

Աստուած, Պարտիզպանիս խնդիրն լսի՛ր,  
Այսպիսեացը յաջողութիւն պարգևի՛ր,  
Իմ կեանքիցս կտրի՛ր, նրանց կենաց զի՛ր,  
Հաստատ մնան միշտ, այս սուրբ պայմաններին:



**ԱՆՕԳՈՒՏՄՏԱԾՄՈՒՆՔ, ԱՆՏԵՂԻՏԱՆԶԱՆՔ**

Որ շատ էլ հոգս անես, ի՛նչ կ'հասկանաս,  
Անմիտ և անհաստատ մարդկային գլուխ,  
Կուգես հազար փորձերով զգաստանաս,  
Անշուշտ մեռնելու ես, ուշ կամ թէ կանուխ:

Երիտասարդ կեանքը, ծերի փոխուեցաւ,  
Հետզհետէ այս կեանքը քեզ ծանրացաւ,  
Ոչ մի կերպ գործերից չ'յաջողուեցաւ,  
Սիպտակեց միրուքդ, որ առաջ էր թուխ:

Չարչարւեցիր գիշեր ցերեկ անդադար,  
 Զրկանքներ տանելով, անթիւ անհամար,  
 Երեւած մնացիր հանգիստ չ'գտար,  
 Իմացիր, այս կեանքը, խիստ չար է և սուղ:  
 Միևնոյն է աշխարհուծա ապրելն  
 Զուր է իրաւ, քեզ քու այսքան տանջելն,  
 Հարստութեան փասք ու պատւին հասնելն,  
 Միևնոյն է, տունդ պալատ է թէ հիւղ:  
 Պարտիզպանի խօսքէն արի դու լսիր,  
 Աշխարհի հոգսերից, իսպառ հեռացիր,  
 Չես հաւատում, դնս, աշխարհը չափիր.  
 Կատարած գործիցդ, կ'ստանաս դու մուխ:



ՍԻՐՈՒՆ ՎԱՐԴԻԿ

Սիրուն վարդիկ անուշահոտ,  
 Թուփիկներդ քո է փշոտ,  
 Չես համբերել դու մայիսին,  
 Եւ ճոխ բացել ես մարտ ամսին:  
 Ափսոս, հիւսիսն կ'փչէ,  
 Դաժան քամին քեզ կ'նեղէ,  
 Չես դիմանալ դու անգութին,  
 Զսն կ'լինես, նորա հարուածին:  
 Թերթիկներդ կոկոնի մէջ,  
 Պահիր դու մինչ ապրելի վերջ,  
 Մի օր յանկարծ կ'զայ մայիս,  
 Նորէն բողբոջով կ'բացուիս:

Այն ժամ սոխակն էլ կ'փութայ,  
 Որ քեզանով ուրախանայ,  
 Նա կը երգէ հազար տեսակ,  
 Ճիշտ կ'պատմէ քու հանգանակ:  
 Կ'գովէ գոյնդ վառվռուն,  
 Եւ անուշ հոտդ քու սիրուն,  
 Զգուշ կնից, վնրդ, դու խորշակից,  
 Տօթ ցերեկուայ սաստիկ շոգից:  
 Գիշերներն էլ հանգստացիր,  
 Լուսադէմին քնից զարգիւր,  
 Առաւօտուայ արշալուսին,  
 Կ'գայ քեզ մօտ կուժը ուսին:  
 Հայ գեղջկուհին սիրուն շարժող,  
 Աչք ու յունքով սիրաշաղախ,  
 Նա մեղմ ձայնով քաղցրիկ կերպէ,  
 Քեզ սիրտ, սիրով կը ողջունէ:  
 Իւր սափորը սառն աղբիւրից,  
 Կ'լցնէ անմահական ջուրից,  
 Վարդ էլ կ'քաղէ, իւր ձեռքին,  
 Ընծայելու սիրահարին:  
 Նա կ'զնայ ճոխ նազելով,  
 Ոսկի ծամերն ծածանելով,  
 Սիրաշաղախ ամեն անձինք,  
 Քեզ տես կ'զան ուրախ հոգիք:  
 Այժմ էլ, վարդս, քեզ կ'կանչեմ,  
 Սիրոյ միջնորդ կը անուանեմ,  
 Մէրիս դու վնրդ, քաղցրիկ սէրիս,  
 Սիրոյ գերեր կ'կատարես:

Մինչև անգամ և ծերերին,  
 Կը հրաւիրես մօտ դալ սէրին,  
 Պարտիզպանին էլ կ'սիրես,  
 Գիտեմ, ազնիւ սրտի տէր ես:



ՏՐՏՈՒՆՁ

Այս էլ այս տեսակ մի ցաւ է,  
 Որին իսկի նման չի լինի,  
 Հեշտ է ասելն, իբաւ է,  
 Բայց ոչ ոք պատմաբան չի լինի:

Չեմ իմանում թէ ինչ ասեմ,  
 Եւ կամ թէ ում բանբասեմ,  
 Ես իմ գործերիս փաստեմ,  
 Ո՛չ ոք ինձի նման չի լինի:

Չ'գիտեմ ես միայնակ եմ,  
 Թէ՛ կնյ այլը, անտեղեակ եմ,  
 Ես ճիշտ մի փակուած սինեակ եմ,  
 Ինձանում օթեան չի լինի:

Անբուժելի շատ ցաւ ունեմ,  
 Մի սաստիկ գլխացաւ ունեմ,  
 Ես մէկի հետը դաւ ունեմ,  
 Բայց մէկը փաստաբան չի լինի:

Այս կեանքի հոգսերն անթիւ է,  
 Բաղդի բերմունքը անիւ է,

Աջն ու ձախը մի հաշիւ է,  
 Ո՛չ մի բանի նման չի լինի:

Պարտիզպան, քեզ քանի՞ մաշես,  
 Անտանելի հոգսեր քաշես,  
 Բաւ է վերքերդ տաշտաշես,  
 Ո՛չ ոքից քեզ դարման չի լինի:



ՀԱՅՈՑ ԱԶԳԱՍԷՐԸ

Ազգի ցաւը մտածողի,  
 Երեսը սլայծառ կլինի,  
 Չի լինի գերի նա փոշի,  
 Խղճմտանքը վառ կլինի:

Հայր՝ եղբայր՝ որդի է՛ նորան,  
 Հարուստ՝ աղքատ՝ և միջակ հայն,  
 Ոխերիմ ոսոխ է միմիայն,  
 Ո՛վ մատնիչ թշուառ կլինի:

Չի խնայիլ իւր ստակին,  
 Առ ազգօգուտ նպատակին,  
 Բայց նման է չար վասակին,  
 Ով դաւաճան անպատկառ կլինի:

Ազգասէրը միշտ բարի է,  
 Վատ օրը նորան տարի է,  
 Նա ազգի շահին գերի է,  
 Միշտ պտղատու ծառ կլինի:

Ազգասէրն է ընկերասէր,  
 Նա է անկեալ խեղճերին տէր,

Նա ինքն է իսկ Փրկչի պատկեր,  
 Միշտ բարեաց պատճառ կլինի:  
 Ազգասէրը և երգիչ է,  
 Վատերին պախարակիչ է,  
 Որքան գովեմ նորան քիչ է,  
 Ձեռքին ջութակ, թառ կլինի:  
 Կը հաղորդէ նա ամենին,  
 Հստ իւր կարեաց օգնել աղգին,  
 Կ'քարոզէ իւրն հետեին,  
 Միշտ քաղցրաբարբառ կլինի:  
 Անտարբեր բիրտ վաշխառուքը,  
 Կ'թափեն միշտ արտասուքը,  
 Փող ուզելիս կանոնն սուգը,  
 Ժլատը վատթար կլինի:  
 Հայից դաւաճաններ եղան,  
 Ինչպէս վասակ և Մեհրուժան,  
 Իսկ և իսկ նորանց է նման,  
 Ով որ անպատկառ կլինի:  
 Պարտիզպան, արիւնն եռ է,  
 Ով իւր աղգին կը ընձեռէ,  
 Ազգատեսացը յատուկ նեռ է,  
 Իւր խօսքին, համառ կլինի:



ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Թէ որդին եղաւ անառակ,  
 Ուղիղ զազափարն ի՞նչ անէ,  
 Վարքով եղաւ չար դժնդակ,  
 Նորա թշւառ հայրն ի՞նչ անէ:  
 Չունեցաւ երես ամօթխած,  
 Եղաւ անպատկառ վատացած,  
 Ծուլութեան մէջ խորասուզած,  
 Խղճուկ ծնող մայրն ի՞նչ անէ:  
 Ով չի պատեց իրեն մեծին,  
 Հօր պատիւը ձգեց գետին,  
 Չի ճանաչեց չարն ու բարին,  
 Խրատիչ, ազգաբարն ի՞նչ անէ:  
 Թէ խրատես նորան յատուկ,  
 Նա կ'փախչի շուտափախուկ,  
 Կը հայհոյէ նա քեզ ծածուկ,  
 Քննիչ, դատարան ի՞նչ անէ:  
 Ում միտքը որ խիստ խաւար է,  
 Ինքն անազնիւ չարար է,  
 Նա իրան չի կառավարէ,  
 Այս լուսաւոր դարն ի՞նչ անէ:  
 Անգործ թափառող պատանին,  
 Ի՞նչ օգուտ է ազգականին,  
 Անյստերգ զեղխուած Նաթանին,  
 Իմաստուն խիկարն ի՞նչ անէ:  
 Պարտիզպան, քու յոյսդ է Աստուած,  
 Միշտ աղօթիր բազկատարած,  
 Պատը որ հիմքից է ծոռած,  
 Նրան ուղիղ լարն ի՞նչ անէ:



ԳՈՒԲԷԻԹ

Այս եկող սիրունը ռւմն էր,  
 Կտրեց իմ կեանքիս դադարը,  
 Կարծես սա դրախտումն էր,  
 Խնչ կուլի սրա հնարը:  
 Ունքերը կամար թխագոյն,  
 Աչքերը փայլուն վառվռուն,  
 Ճակատը սիպտակ, որպէս ձիւն,  
 Չեղքումն է բունել քնարը:  
 Այտերը կարմրակաթ է,  
 Շրթունքից մեղր կ'կաթէ,  
 Ատամները իսկ սաղափ է,  
 Կոլոր է դէմքի նկարը:

Պարտիզպան, միտքդ մինչ ռւր է,  
 Չես տեսնում, այսօր տխուր է,  
 Այս սիրով այրուելդ դուր է,  
 Շատ թունդ է, սորա վճարը:



ՕԳՆՈՒԹԻԻՆ ՀԱՍԻՐ

Հետզ հետէ գործերս ձախորդուում է,  
 Ո՛վ բազմագուլթ դո՛ւ ինձ օգնութիւն հասիր,  
 Օր ըստ օրէ աշխատանքս պակասում է,  
 Ո՛վ բազմագուլթ, դո՛ւ ինձ օգնութիւն հասիր:  
 Երկար չ'տևեց ինձ, բազդիս բերմունքը,  
 Բազմացրեց խեղճիս, ցաւն ու երկունքը,  
 Չի բուսանում էլ, իմ ցանած սերմունքը,  
 Ով բազմագուլթ, դո՛ւ ինձ օգնութիւն հասիր:

Հարազտներից յոյրս կտրած է,  
 Օտարն ինձանից խիստ զայրացած է,  
 Ամեն կերպով միջոցս սղացած է,  
 Ով բազմագուլթ, դո՛ւ ինձ օգնութիւն հասիր:  
 Որին որ արել եմ ես մեծ լաւութիւն,  
 Մոռացել է ինձ, անում է վատութիւն,  
 Չգում եմ ամեն կերպ վիշտ և նեղութիւն,  
 Ո՛վ բազմագուլթ դո՛ւ ինձ օգնութիւն հասիր:  
 Մօտ եմ մեռնելու, անհապաղ հասիր,  
 Տէր իմ մի ուշացիր, այլ թէ վաղ հասիր,  
 Եթէ ոչ կ'մտնեմ ես դազաղ, հասիր,  
 Ո՛վ բազմագուլթ, դո՛ւ ինձ օգնութիւն հասիր:



ԱՂՔԱՏ ՔԱՂԱՔԱՑԻ

Այսօր տօն է, դիւի նոր շորեր են հագել,  
 Տօն օրերը խեղճ աղքատիս համար չէ,  
 Փողոցները և տներն են զարդարել,  
 Ձարդարանքը խեղճ աղքատիս համար չէ:  
 Անուշահամ խորտիկներ են պատրաստել,  
 Տեսակ աեսակ ըմպելիքներ են շարել,  
 Սեղանները դահլիճներ են դուրս տանել,  
 Բայց ի՞նչ օգուտ, խեղճ աղքատիս համար չէ:  
 Գրպանները արծաթ ոսկով են լցրել,  
 Կառապանին կանուխ զալ են պատուիրել:

Ժամի ութին եկեղեցին են հասել,  
 Այս ծէսերը խիստ շատ հին են, խոմ նոր չեն:  
 Տէր հայրերին ժամոց, աջահամբոյր բերել,  
 Որոնք շոկ շոկ թղթերու մէջ կոլոյել,  
 Միշտ պատրաստ են ջերմեռանդ նուիրել,  
 Խեղճ աղքատիս, բաժինն արդեօք բաս ի՞նչ է:  
 Քեմ է կանգնած մեծ տէր հայրը՝ քարոզում,  
 Ժողովրդին յաճախ ժամ զալ հրաւիրում,  
 Ամէն կերպով, նուէրներ հանգանակում,  
 Հազար ափսոս, որ աղքատիս համար չէ:  
 Տէր հօր քարոզով գումար է ժողոված,  
 Առանց կարծիք եեկցփոխին է յանձնած,  
 Աղքատներիս անունով է այդ արած,  
 Բայց իմացէք, որ աղքատիս համար չէ:  
 Նուէր տուող պարոնը, թող իմանայ,  
 Մի օր էլ մեր խրճիթի դուռը բանայ,  
 Մեր վիճակը տեսնելով չի՞ զարմանայ,  
 Որ օր արև խեղճ աղքատիս համար չէ:  
 Ժամից երբ դուրս են գալիս պարոնները,  
 Մեզ չեն նայում, ուրիշ տեղ է աչքերը,  
 Պարզած մնաց, մեր մերկ և ցուրտ ձեռները,  
 Աղքատներիս օրն էլ իրաւ մի օր չէ:  
 Ողորմութիւն շնորհեցէք պարոններ,  
 Կրկնում եմ ես, նոյնպէս և իմ նմաններ,  
 Մեզ չեն նայում, նոյնպէս և մեր տէր հայրեր,  
 Աղքատներիս օրն էլ իրաւ մի օր չէ:  
 Մուշտակ ներքուց, հաստ փարաջէն վերայից,  
 Ի՞նչ հոգան է, որ մենք գողում ենք ցրտից,

Տունը դուրսը, առատ է ամեն բանից,  
 Մեզ ի՞նչ օգուտ, որ աղքատիս համար չէ:  
 Արդեօք ինչո՞ւ ստեղծեց Աստուածը,  
 Ո՛չ որ չ'կայ, որ լսի մեր ասածը,  
 Մեզ օգուտ չէ, և տէր հօր քարոզածը,  
 Ժողած փողը, խեղճ աղքատիս համար չէ:  
 Պարտիզպանին պատմենք մենք մեր վիճակը,  
 Թո՛ղ լաւ նայի, դէն ձգելով դիմակը,  
 Մի կտոր հաց է մեր բուն նպատակը,  
 Կեանք խնդութիւն խեղճ աղքատիս համար չէ:



ԱՆՏԱՐԲԵՐ ՍԻՐՈՒՆԻ

Դու խնդում ես, ես լալիս եմ,  
 Մի՞թէ քու սիրտդ ժեռ քար է,  
 Ուզած խոստմունքդ տալիս եմ,  
 Թո՛ղ դատի ում խիղճն արդար է:  
 Բոլոր սիրուններդ էք անփոյթ,  
 Ափսոս որ չունիք մի քիչ գուր,  
 Անցնում է դարը շուտափոյթ,  
 Այրուելս քեզի համար է:  
 Երեսդ տեսնալ ուղողը,  
 Խնդրում է դէն ձգել քողը,  
 Կազմուածքդ յօրինողը,  
 Կարծես թէ ճիշտ սիրահար է:

Արի դու անգուժ մի լինիլ,  
Ինձ հետ սիրով ընկերացիր,  
Սիրոյ յարզը լաւ իմացիր,  
Մարգարտի հետ հաւասար է:  
Պարտիզպանդ դարդիմանդ է,  
Ամեն խօսքը անդամանդ է,  
Քու կարօտովդ հիւանդ է,  
Քեզ տեսնալն դեղ ու ճար է:



78986

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20<sup>0</sup>/<sub>0</sub> զեջում:

Հասցեն՝ Тифлисъ, 1-й Успенскій туп. домъ  
Дабагова № 10. Аванесу Асланянцу

2013

